

# «ՄԻԼ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ՎԵՂՈՒ ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 19-ՐԴ ՀՈՐԱՏԱՆՑՔԻ  
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

*ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ*

«ՄԻԼ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ

ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ

տնօրեն՝

Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երևան – 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ -----3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----7

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը -----7

1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը -----7

1.3 Նախագծման նորմատիվային հիմքը .....8

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----10

2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը -----10

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը -----14

2.3 Կլիմա -----20

2.4 Մթնոլորտային օդ -----25

2.5 Աղմուկի մակարդակը-----28

2.6 Ջրային ռեսուրսներ-----28

2.7 Հողային ծածկույթ -----30

2.9 Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ-----33

2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ -----36

3.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----40

3.1 ՀՀ Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը----- 42

4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----42

5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----43

5.1. Բնապահպանական մշտադիտարկումների պլան -----46

5.2 Սանիտարական պաշտպանիչ գետի -----48

5.3 Արդյունաբերական սանիտարիան -----50

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

**Շրջակա միջավայր`** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

**Շրջակա միջավայրի վրա ազդեցություն`** հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

**Նախատեսվող գործունեություն`** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

**Ձեռնարկող`** սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

**Ազդակիր համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

**Շահագրգիռ հանրություն`** փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

**Գործընթացի մասնակիցներ`** պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ` ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

**Հայտ`** ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրության փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

**Բնության հատուկ պահպանվող տարածք`** ցամաքի (ներառյալ` մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի` սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

**Ազգային պարկ`** բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

**Ազգային պարկի արգելոցային գոտի`** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

**Ազգային պարկի արգելավայրային գոտի`** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

**Ազգային պարկի ռեկրեացիոն գոտի`** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

**Ազգային պարկի տնտեսական գոտի`** ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

**Պետական արգելավայր`** գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

**Պետական արգելոց`** գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

**Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի`** տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի,

կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

**Լանդշաֆտ**՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

**Հող**՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ զենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

**Հողային պրոֆիլ**՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և զենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

**Խախտված հողեր**՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

**Հողի բերրի շերտ**՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

**Հողի պոտենցիալ բերրի շերտ**՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

**Հողածածկույթ**՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

**Հողի բերրի շերտի հանման նորմեր**՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ<sup>3</sup>), զանգվածը (տ).

**Ռեկուլտիվացում**՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

**Ռեկուլտիվացիոն աշխատանքներ**՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

**Կենսաբանական բազմազանություն**՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

**Երկրաբանական ուսումնասիրություններ`** ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

**Բնապահպանական կառավարման պլան`** ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի` որոշակի ժամանակի ընթացքում.

**Բնության հուշարձան,** բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

**Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձաններ`** պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները` իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը` անկախ պահպանվածության աստիճանից:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը կազմվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Գործունեության անվանումն է՝ ՀՀ Արարատի մարզի Վեդու ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 19 հորատանցքի արդյունահանում:

Նպատակն է՝ թիվ 19 հորատանցքի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանում:

### 1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

«ՄԻԼ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերությունը ցանկանում է հանքային ջրերի արդյունաբերական շշալցում իրականացնել ՀՀ Արարատի մարզի Վեդու ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 19 հորատանցքից՝ 19535.0մ<sup>3</sup>/տարի կամ 0.62լ/վրկ արտադրողականությամբ:

Ընկերությունն իրականացնելով ՀՀ Արարատի մարզի Վեդու ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 19 հորատանցքի հանքային ջրի շշալցում՝ բնական բուժիչ սեղանի հանքային ջուր ստանալու համար: Նման միջոցառումը կապահովի շուկայի ավելացող պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղերը՝ նպաստելով բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը: Բացի այդ, ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել ազդակիր համայնքի կարիքների բավարարման համար:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 19535.0մ<sup>3</sup>/տարի կամ 0.62լ/վրկ: Շշալցումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում: Շշալցված հանքային ջուրը իրացվելու է Հայաստանի Հանրապետությունում:


Ընկերությունը հայցում է ստանալ հանքային ջրի արդյունահանման թույլտվություն՝ 20 տարի գործողության ժամկետով:

Ջրհավաք ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 հորատանցքից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվելու է խմելու որակի չժանգոտվող պողպատից պատրաստված ցիստեռնով:

Հորատանցքի տարածքը առանձնացված է 15\*20մ չափսերի, շուրջ 2մ բարձրության քարե ցանկապատով, հանքային ջուրը արտաքին աղտոտումից

պաշտպանելու նպատակով կառուցվել է տնակ : Տարածքի հարևանությամբ անցնում է ավտոճանապարհ:

Ստորև ներկայացվում է հորատանցքից հանքային ջրի կապտածի սխեմատիկ պատկերը՝



Հայցվող տարածքի ջրամատակարարումը կատարվում է աշխատակիցներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակի, ավտոճանապարհի ջրման համար:

Խմելու ջուր բերվում է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը մատակարարվում է ջրցան լվացող ավտոմեքենայով:

Ջրառի իրականացման համար լիազոր մարմնի հետ կկնքվեն համապատասխան ջրօգտագործման պայմանագրեր, որոնցով կսահմանվեն ջրառի պայմանները: Որպես նախնական տարբերակ ախատեսվում է խմելու ջուրը ներկրել Դաշտաքար համայնքից, իսկ տեխնիկական ջուրը՝ գյուղի ոռոգման համակարգից:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով: Ընկերությունը ցանկանում է դառնալ տարածքաշրջանի ջրերի շուկայի առաջատարներից մեկը, որն իր գործունեության առաջին իսկ օրվանից ընտրելու է դինամիկ զարգացման ուղին և սպառողների պահանջների ու սպասելիքների բավարարման սկզբունքին հավատարիմ մնալով մշտապես



ապահովելու է բարձր որակ՝ տարեցտարի առաջարկելով առավել թարմացված և որակյալ ապրանքատեսականի:

Ելնելով ջրի արդյունավետ օգտագործման պայմանից՝ հորատանցի վրա կտեղադրվի ջրաչափ, որով կիրականացվի արդյունահանվող ջրի քանակի հաշվառում, դրա տվյալների հիման վրա սահմանված կարգով պետական բյուջե կմուծվի բնօգտագործման վճար:

Ընկերությունում ստեղծված են ժամանակակից արտադրությանը ներկայացվող բոլոր պահանջներին բավարարող արտադրական պայմաններ ու մշտապես իրականացվում են բարեփոխման ու բարելավման գործընթացներ:

Ընկերությունը՝ հավատարիմ լինելով կորպորատիվ և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին՝ նախատեսում է համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումների շարք: Բարձր գնահատելով համայնքի դերը գործարանի զարգացման մեջ՝ ընկերությունը պատրաստակամ է ներկայացնել իր կորպորատիվ և սոցիալական քաղաքականության տեսլականը՝ համայնքի զարգացմանը տարեկան տրամադրելով մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ:

### **1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը**

«ՄԻԼ հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

2012թ-ին Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունմամբ հիմք դրվեց մի շարք նոր ընթացակարգերի, որոնց թվին պատկանում է նաև երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմումը:

Շրջակա միջավայրի համար կայուն/անվտանգ և սոցիալապես ընդունելի նախնական գնահատման հայտը պետք է անդրադառնա բնապահպանական բոլոր ասպեկտներին և պետք է կազմվի ՀՀ բնապահպանական բնագավառի իրավական ակտերով սահմանված պահանջների և նորմերի հաշվառմամբ:

Այդպիսի նորմատիվ պահանջներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- Թափոնների մասին օրենք (2004) Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

- ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

- «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

- ՀՀ առողջապահության նախարարի 2003թ-ի մարտի 10-ի թիվ 137 հրամանը:

- ՀՀ կառավարության 2021թ-ի հոկտեմբերի 21-ի «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 1079-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1733-ն որոշումը,

- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշումը

ՀՀ նոր Կարմիր գրքի պատրաստումը իրականացվել է 2007–2009 թթ-ի ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և այլ գիտական կառույցների մասնագետների կողմից: Տեսակների վիճակի գնահատումը և կատեգորիաների որոշումը իրականացվել է միջազգային չափորոշիչների հիման վրա՝ Բնության պահպանության միջազգային միության դասակարգիչների կիրառմամբ (IUCN, 2007–2009, տարբերակ 3.1): ՀՀ Կարմիր գիրքը ներառում է 153 տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից՝ ոսկրային ձկներ (Osteichthyes –7 տեսակ), երկկենցաղներ (Amphibia –2 տեսակ), սողուններ (Reptilia –19 տեսակ), թռչուններ (Aves–96 տեսակ) և կաթնասուններ (Mammalia –29 տեսակ): Ներառված են նաև 155 տեսակի անողնաշար կենդանիներ, այդ թվում՝ 16 տեսակի փորոտանիներ և 139 տեսակի միջատներ:

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշումը

Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը հրատարակվել է 2007–2009 թվականների ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային

ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի մասնագետների կողմից: 2010 թվականին հրատարակված Կարմիր գրքում ընդգրկված է 452 բույսերի և 40 սնկերի տեսակների նկարագրություններ և 223 առանձին մտահոգիչ կարգավիճակով բուսատեսակներ: Կարմիր գրքում գրանցված 675 բուսատեսակները ներկայացված են միջազգայնորեն ընդունված 6 կարգավիճակով՝ կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված, խոցելի, վտանգման սպառնացող վիճակին մոտ, տվյալների անբավարարությամբ և քիչ մտահոգող տեսակներ:

- «Բնության հատուկ տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ)
- ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի N 191-Ն որոշում, որը կարգավորում է ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման հետևանքով (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում) բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների (այսուհետ՝ մշտադիտարկում) իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) եռամսյակային կտրվածքով հաղորդումները, տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքում տեղադրելու հետ կապված հարաբերությունները:

## 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Արարատ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 19 հորատանցքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Վեդու տարածաշրջանի Դաշտաքար բնակավայրի տարածքում, բնակավայրից շուրջ 2.2կմ, Վեդի քաղաքից 2.4կմ հեռավորության վրա, Բորոտաղբյուր գետի կիրճում: Հայցվող տարածքից 74մ հեռավորության վրա գտնվում է արտադրական գործառնական նշանակության հողամաս, իսկ 750մ հեռավորության վրա գտնվում է Հրեշտակների ձոր տուրիստական վայրը: Այլ զգայուն կլանիչներ հորատանցքի տարածքում բացակայում են :

Հորատանցքի անմիջական ազդեցության գոտում բնապահպանական և պատմամշակույթային հուշարձաններ, անտառային և բնապահպանական տարածքներ բացակայում են :

Հորատանցքի կոորդինատներն են՝

Y=8478010.37

X=4423240.42





Հորատանցքի իրադրային սխեման  
Վարչատարածքային բաժանման տեսակետից հորատանցքը գտնվում է  
Դաշտաքար բնակավայրի տարածքում:





Ընդհանուր տեսքը



## **2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը**

Արարատի մարզի հարավ-արևմտյան եզրին գուգահեռ 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը:

Հյուսիսում Երանոսի լեռնաշղթան է: Հյուսիսային սահմանն անցնում է Ագատ և դրա վտակ Գողթ գետերով:

Հյուսիս-արևելքում Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնազանգվածներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555.7մ:


Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:

Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ագատը, Վեդին: Համեմատաբար փոքր գետերից են Արածոն, Չորասուհեղեղատարը, Ագատի ու Վեդիի վտակները՝ Քաջառուն (Դարբանդ), Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ագատի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Զովաշենի ջրամբարը և համանուն ՀԷԿ-ը:

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին):






Հանքավայրը տեղադրված է Արաքս գետի հարթավայրի ցածրադիր ռելիեֆի վրա բարձրացող բարձունքի լանջերի վրա, և միայն արևելքից և հյուսիս-արևելքից սահմանափակվում է Ուրցի լեռնաշղթայի բարձր լեռնաճյուղով:

ՌԵԼԻԵՖԻ ՉԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՉԵՎԵՐ





ՏԻՊԵՐ




Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ)

-  Չառիքափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
-  Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
-  Չափավոր զառիքափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով
-  Ուռուցիկ լանջերով գմբեթաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով
-  Մնացուկային բարձունքներ՝ ձորակներով թույլ մասնատված



Ցածրլեռնային գոտի (մինչև 1 500 մ)

-  Մեղմաբեք, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով
-  Խիստ մասնատված, հաճախ անհամաչափ լանջերով (կուեստներ) լերկուտներ (Bad lands)

Վահանաչի բարձրադիր լեռներ (2 800 մ և բարձր)




-  Թույլ մասնատված, մեղմաբեք աստիճանակերպ լանջեր
-  Աստիճանակերպ լանջեր, մասնատված U-աձև հովիտներով
-  Մեղմաբեք, բլրավետ լանջեր, մասնատված V-աձև հովիտներով



Սարահարթեր և սարավանդներ

-  Մերձգագարային, հորիզոնականին մոտ, թույլ բեք մասամբ բլրավետ
-  Ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված





Լեռնային հարթություններ


Միջին բարձրություն (1 500-2 500 մ)


-  ա) հորիզոնականին մոտ
-  բ) բեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ)
-  Հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, թույլ ալիքավոր (1 500-2 500 մ)

-  Նախալեռնային շլեյֆ՝ ա) 2 100-2 300 մ, բ) մինչև 1 500 մ
-  Թեք, դարավանդավորված (1 200-2 100 մ)


Ցածրադիր (մինչև 1 500 մ)

-  Թեք, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500 մ)
-  Նախալեռնային, հորիզոնականին մոտ (250-800 մ)
-  Ալիքավոր, դարավանդավորված
-  Դարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով






ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Սողանքներ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Մոտակա սողանքայի մարմինը հայցվող տեղամասից գտնվում է առնվազն 6-7կմ դեպի արևմուտք:

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ում տեղադրված ըստ սեյսմիկ գոտիների Հայաստանի Հանրապետության համայնքների ու բնակավայրերի ցանկի, Դաշտաքար գյուղը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.4g գրունտի առավելագույն հորիզոնական արագացումը:

Շրջանի երկրաբանական կառուցվածքը կազմված է հրաբխային և նստվածքա-տերրոգենային վերին կավճի հասակի նստվածքներից, պալեոցենից, էոցենից և օլիգոցենից, որոնց մեջ տարածված են բազմատեսակ էքսկրուզիվ միջպլեոցենային հասակի առաջացումներ:

Տարածքում լայնորեն տարածված են դեզյունկտիվ խախտումներ, կապված ինչպես մեծ Երևանյան խզվածքի ընդհանուր կովկասյան ուղղության, այնպես էլ ավելի փոքր միջօրեական ուղղության խզվածքների համակարգի հետ:

Վեդիի ածխաթթվային ջրերի հանքավայրի տարածքում տարածված են վերին կավճի հասակի ապարները, ներկայացված կոնգլոմերատներով, ավազակավային առաջացումներով, նստվածքներով, որոնք առաջացնում են ասիմետրիկ Երսիսի բրախիանտիկլինալային ծալք՝ հյուսիսային մեղմ (10-20°) և հարավային ավելի կտրուկ (60-80°) թեքություններով: Վերոգրյալ ապարները, որոշ տեղերում, վերնից ծածկված են չորրորդականի հասակի այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 7-10-ից մինչև 45 մ:

Ստորգետնյա ջրերը գտնվում են չորրորդական հասակի նստվածքներում և վերին կավճի, պալեոգենի և նեոգենի ճեղքվածքային ապարներում:

Ածխաթթվային հանքային ջրերը հանդիսանում են ուսումնասիրման առարկա, որոնք կապված են տեկտոնական խզվածքների և վերին կավճի հասակի ջարդված ապարների հետ: Շրջանը բաժանված է հանքային ջրերի առաջացման երեք ոչ մեծ տարածքների՝ Ակնաղբյուրի, Շորաղբյուրի և Վեդիի (Բորոտ-աղբյուրի):

Ամենից շատ հետաքրքրություն է ներկայացնում Վեդիի հանքաառաջացումը, որը գտնվում է Բորոտ-աղբյուրի տեկտոնական կիրճում, որի երկարությունը մինչև 2 կմ է, իսկ լայնությունը 30-40-ից մինչև 150-200մ է: Վերջինս հատվում է Երասիսի անտիկլինալ ծալքի հետ միջօրեականի ուղղությամբ:

1971-1973թթ-ին Հայկական ՍՍՀ երկրաբանական վարչության կողմից իրականացված Հյուսիսային հիդրոերկրաբանական էքսպեդիցիան մանրակրկիտ կատարել է Վեդիի ածխաթթվային անքային ջրերի հանքավայրի հետախուզություն:

Այն կատարել է 12 հորատանցքերի հետախուզական 146-300 մ խորությամբ հորատում, ընդհանուր 2135 գծամետր: Հորատանցքերը տեղադրված են երկու գծով, ձգված Բորոտ-աղբյուրի կիրճի երկայնքով՝ հարավից հյուսիսից երկու կմ երկարությամբ, 84-320մ մեկը մյուսից հեռավորությամբ: Դրանցում կատարվել

եներկրաֆիզիկական ուսումնասիրություններ և փորձարարական հիդրոերկրաբանական աշխատանքներ:

Հորատանցքերի նմուշառումն իրականացվել է 28 միջակայքային և 10 փորձնական նմուշառմամբ:

1972թ-ի նոյեմբերի 21-ից մինչև 1973թ-ի սեպտեմբերի 26-ը հանքավայրում իրականացվել են մակարդակի վերականգնում և հորատանցքերի միջև հիդրավլիկության կախվածության ուսումնասիրություններ:

Ածխաթթվային հանքային ջուր է հայտնաբերվել բոլոր սենոնի հասակի ճեղքավորված կրաքարերի հաստվածքների հորատանցքերում, որտեղ առաջացնում են հիդրավլիկորեն միմյանց հետ կապված երկու ջրատար հորիզոններ, առաջինը՝ 12-32մ խորությամբ և 3-30 մ հզորությամբ, երկրորդը՝ 51-94 մ խորություններում, 10-20 մ հզորությամբ:

11-րդ հորատանցքը (գլխավոր) հորատելիս 12-80մ խորությունների վրա հայտնաբերվել են ջրային հզոր պաշարներ, որոնք առաջացել են երկու հորիզոնների հատմամբ:

Պիեզոմետրիկ մակարդակները տեղադրվում են գետնի մակարդակից 0.6-7մ ցածր կամ 0,12-3,4մ բարձրությամբ:

Համաձայն հորատանցքերի տվյալների՝ ջրատար ապարների ջրատարողությունը հիմնականում փոքր է:

Հանքավայրի տարածքում տարբեր ժամանակաշրջաններում հորատված հորատանցքերից ցայտել են 11,12, 19, 20 համարները:

Հանքային ջրի դեբիտը կազմում է 0,2-10 լ/վրկ 0,14-ից 1,2 մ խորություններում:

Համաձայն ուսումնասիրությունների, 12, 19, 20 համարի հորատանցքերից ցայտումը հիմնականում կապված է դրական ճնշումների հետ: 11-րդ հորատանցքից ցայտումը հիմնականում կապված է գազային գործոնից, որի արժեքը 0.3 է:

Հնաքային ջրերի որակը բնութագրված է թվով 52 հիմնական, 202 քիմիական անալիզների, 8 գազային և 100 սպեկտրալ անալիզներով:

Վեդիի հանքավայրի ջրերը հիմնականում հանդիսանում են ածխաթթվային, հիդրոկարբոնատային – սուլֆատացված, կալցիումական- նատրիումական- մանգանային, համեմատաբար ցածր հանքայնացված (1.8-4.1 գ/լ) և թույլ թթվային- չեզոք միջավայրով (рН 6,1-7,0): Յուրահատուկ տարրերից ջրում կան յոդ, երկաթ, մանգան, մոլիբդեն, սիլիցիում, ալյումին, պղինձ, ստրոնցիում և այլն:

Ընդհանուր գազերի պարունակությունը ջրում փոխվում է 1,9-2,8 գ/լ: Ջուրը հիմնականում պարունակում է ածխաթթու գազ և փոքր քանակությամբ ազոտ և հելիում:

Ջրերի բակտերիոլոգիական վիճակը լավն է: Վնասակար ստեպակները դրանցում բացակայում են կամ գտնվում են նորմալի սահմաններում:

Հորատանցքերից և աղբյուրներից մշտադիտարկումների փորձարարական տվյալները.

Բնութագրիչներ	Հորատ . N 11	Հորատ . N 12	Հորատ . N 19	Աղբյուր N 1	Աղբյուր N 3	Աղբյուր N 4
Հորատ . խոր . մ	151	146	148	-	-	-
Ջրատար հորիզոնների բացման միջակայքը	12-80	51-61	76-91,2	-	-	-
<u>Մշտադիտարկումներ</u> Ամսաթիվ	22.7.71թ 23.9.72թ	16.8.71թ 19.4.72թ	11.4.72թ 23.9.72թ	15.4.72թ	մինչև 20.9.73թ	
Գետնի մակերևույթից ջրի դինամիկ մակարդակը, մ	-2,62	+0,06	-0,2-ից +0,18	-	-	-
Ջրի դեբիտ, լ/վրկ	7,15	1,2-1,3	0,6-0,9	0,017-0,5	0,5-0,63	0,18-0,33
<u>Ջերմաստիճանը, °C</u>	21	18,1-18,3	18,3-18,5	16,5-17	18-18,6	16-16,7
<u>Պարունակությունը</u> HCO <sub>3</sub> , գ/լ CO <sub>2</sub> (լուծված), գ/լ	2,2-2,4 1,8-1,98	1,5-1,7 1,97	1,5-1,76 1,87-1,92	1,8-1,95 2,0	1,78-2,13 2,2-2,3	1,15-1,29 1,28-1,75
Ստատիկ մակարդակի որոշումը (23.9.72թ. -ից 21.10.72թ.)	+3,45	-	+3,0	-	-	-

<u>Փորձարարական տվյալներ</u> (22.11.72թ. -ից 20.9.73թ.)						
Երկրի մակերևույթից տեղադրման խորությունը, մ	-2,62	-	+0,16	-	-	-
Հորատանցքերի դեբիտ, լ/վրկ	7,15	-	0,66	0,02-0,05	0,5-0,6	0,2-0,3
Ջերմաստիճանը, °C	21	-	18,1-18,3	16,5-17,0	18,0-18,6	16,0-16,7
<u>Պարունակությունը</u> HCO <sub>3</sub> , գ/լ CO <sub>2</sub> (լուծված), գ/լ	2,25-2,38 1,96-1,99	- -	1,57-1,99 2,17-2,58	1,8-1,9 2,0	1,8-2,0 2,2-2,3	1,0-1,2 1,3-1,7
Հանքայնացում, գ/լ	3,7-4,1	-	2,7-2,9	2,6-3,2	3,3-3,6	2,1-2,3

Հանքային ջրերի տեսակը	Ջերմ . -ը, °C	Ընդհանուր հանքայնացում, գ/լ	CO <sub>2</sub> (լուծված), գ/լ	CO <sub>2</sub> (արտազատվող), գ/լ	Հարատ . -ը և աղբյուր . -ը, ըստ որոնց կատարվել են հաշվ.	Պաշարներն ըստ կատեգորիաների մ <sup>3</sup> /օր
-----------------------	---------------	-----------------------------	--------------------------------	-----------------------------------	--	--

						A	B	C <sub>1</sub>
ածխաթթվային, հիդրոկարբոնատային – սուլֆատացված, կալցիումական-նատրիումական, սառը	18-21	2,7-3,8	1,9-2,6	0,4-0,5	Հոր. 19, 11 Աղբյ. 1, 3, 4 Հորատ. 12	674	60	51
						674	60	51
Ընդհանուր 785 մ <sup>3</sup> /օր								

ԽՍՀՄ ՊՊՀ-ի 16.10.1975թ-ի թիվ 7332 արձանագրությամբ Վեդիի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի պաշարները հաստատվել են հետևյալ քանակներով և կարգերով՝

Հանքային ջրերի տիպը	Պաշարների կատեգորիա, մ <sup>3</sup> / օրեր		Հանքայնացում, գ/լ	Լուծված ածխաթթվի պարունակությունը, գ/լ	Ջերմաստիճան, °C	Հորատանցքերի համարը
	A	B				
Ածխաթթվային հիդրոկարբոնատային նատրիում-կալցիումական թույլ թթվային սառը	618	- - 107	3,7-4,0 2,5-2,9	1,9-2,0 1,9-2,0	21 18-19	11 12,19

### 2.3 Կլիմա

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության:

Մասնավորապես այս մարզում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

- չոր խիստ ցամաքային
- չոր ցամաքային
- չափավոր ցամաքային
- բարեխառն
- ցուրտ լեռնային
- ձյունամերձ

Արարատի մարզում տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր և բարձր լեռնային շրջանների միջև տատանվում է +10 °C-ի և -2 °C-ի միջև:

Ձմռանն անհողմ եղանակի պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում:

Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է 15 °C-ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը:

Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները:

Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Քամիների միջին տարեկան արագությունը կազմում է 2.3մ/վրկ, քամու առավելագույն արագությունը ապրիլ ամսին 3.2մ/վրկ է: Անհողմությունները կազմում են 29%:

Մարզի հարթավայրային շրջանների համար բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը:

Հունվարյան միջին ջերմաստիճանն է այդ շրջաններում համապատասխանաբար -6 °C և -12 °C, հուլիսյան ջերմաստիճանը՝ +26 °C և +8 °C, միջին տարեկան տեղումները՝ 200մմ և 1000մմ: Ցածրադիր շրջաններում դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են -33 °C և +42 °C, ընդ որում վերջինս Հայկական լեռնաշխարհում դիտարկված բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է և այն գրանցվել է Արարատյան հարթավայրի հարավ-արևելքում:

Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

### Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	V		I	II	III	X		I	II				
1	2								0	1	2	3	4	5	6	7
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42

### Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	V		I	II	III	X		I	II	Ամեն. ցուրտ ամսվա %		Ամենա շոգ ամսվա, %	
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29



Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	միջին ամսական												Ձնածածկույթ			
	Տեղումների քանակը															
	օրական առավելագույն մմ															
ըստ ամիսների.												Տարկան	Առավ տասնօրյա բարձ-ը, սմ	Տարվա ձն ածածկույթ ով օրերի քան-ը	Չյան մեջ ջրի առավե- լագույն քանակը, մմ	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					
Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21	16	31	35	2	61
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37			

Արևափայլի տևողությունը

Բնակ-ի, օդկայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												S ար գումար
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգո	Սեպ	ոկ	ոյ	եկ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4
Արարատ	123	147	175	168	312	357	422	378	334	63	75	14	968

Անարև օրերի քանակը

Բն ակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տար-ն
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
Արարատ	9	6	3	2	1					1	2	8	32

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բն-ի, օդ-ական կայ-ի անվ-ը	Օդի ջերմաստիճանը, 0C								Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %		Մթն տեղ. և գրունտի սառչման խորությունը			Քամի		
	ամենացուրտ օրվա		ամենացուրտ հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը		բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը		Տևողությունը, օր	Միջին ջեր-ը ժամ-ի միջ օր ջերմ-ով՝ ոչ բարձր, °C	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղ.քան-ը նոյ- մարտ ամիս, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղ-ը դեկտեմբերին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին մ/վ
	0,98	0,92	0,98	0,92			0	8								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	-24	-21	-21	-17	-3.5	-32	9.0	66	136	153	78	66	96	37	ՀվԱրլ	2.7
								-2.3	-0.9	-1.9						

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ		
	Ապահովվածություն- թյամբ, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակ ապրիլ- հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արարատ	33	34	42	33.5	14.2	45	29	135	37	Հս	2.6

Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը


Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական բնութագիր
Ցուրտ (Ց)  Լեռնային շրջաններ՝  Ապարան, Գավառ, Մարտունի, Ֆանտան, Հրազդան, Սևան, Սիսիան, Թալին և այլն	1600 -ից ավելի	Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ  Զմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ

**2.4 Մթնոլորտային օդ**


ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:


2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան գերազանցել է հիմնականում Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան և Արարատ քաղաքներում: Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:






2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն Վանաձոր քաղաքում՝ աննշան, իսկ մնացած քաղաքներում ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 4-րդ եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

*Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.*



Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին են դասվում Դաշտաքար բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

## **2.5 Աղմուկի մակարդակ**

Հանքային ջրի հորատանցքի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը գյուղի տարածքում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):

## **2.6 Ջրային ռեսուրսներ**

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Նրա տարածքով են անցնում Հրազդան գետն իր ստորին հոսանքով, իսկ Ազատ, Վեդի և Արածո գետը՝ ամբողջ ընթացքով՝ ակունքից գետաբերան: Մի քանի տասնյակ գետակներ էլ ամռանը բոլորովին ցամաքում են:

Գետերից միայն Արածո գետն է, որ իր ստորին հոսանքում անցնում է ՀՀ-ից դուրս: Մնացած գետերի ջրերն ամռանը լիարժեք օգտագործվում են ոռոգման կարիքների համար: Մնումը ձնհալքային, անձրևաջրային, վարարում են ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգման նպատակով Ազատ գետի վրա կառուցվել է համանուն ջրամբարը, Արածո գետի վրա՝ Ջանգալատան ջրամբարն է Հորթուն բնակատեղիի մոտ:

Մարզում կառուցվել է Կախանովի և Արտաշատի ջրանցքները 19-20-րդ դարերում:

Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն.Ն.Կախանովի նախաձեռնությամբ դեռևս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Արազդայանի (Երասխավան) կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թվականի նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թվականին:

Արտաշատի ջրանցքը կառուցվել է 1930 թվականին: Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երևանի տարածքում, ունի 61կմ երկարություն: Վեղի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

Հանքավայրը ջրագուրկ է: Տարբեր ժամանակներում կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքների ընթացքում հանքավայրում ջրավորվածություն և ջրերի լճացում չի հայտնաբերվել:

Հանքավայրի ռելիեֆի բնույթը, տրավերտինների վրա փխուր առաջացումների ծածկի բացակայությունը, տրավերտինների խտությունը բացառում են մթնոլորտային տեղումների տարածումը դեպի խորքը: Վերջիններս հոսում են կրաքարերի վրայով, քայքայում են նրանց, առաջացնելով ձորակներ և հոսում են դեպի Արաքս գետի հանքավայրը լցված բերվածքային ապարները: Տրավերտինների ծակոտկենները և ձեղքերը թափանցած ջրերը հոսում են հին ռելիեֆով դեպի Արաքս գետի հարթավայրը:

Բարձրադիր շրջանի ջրերը, հոսելով դեպի Արաքս գետի հովիտը, մուտք են գործում մուգ-կապտագույն լճային կավերի տակ և սնում արտեզյան ավազանները, իսկ մասամբ էլ, հոսելով բերվածքների մակերևույթով, առաջացնում են մեկուսացված ջրային ավազաններ և վերնաջրեր:

Հանքավայրի շրջանը գտնվում է Արարատյան միջլեռնային գոգահովտում: Այս գոգահովտի սահմաններում առանձնանում է Արարատյան արտեզյան ավազանը երեք առաջատար ջրատար ջրատար հորիզոններով՝ նրանցից մեկը լճային ջրամերժ կավերի վրա, երկուսը՝ նրանց տակ: Այդ ստորին հորիզոնները ամենաջրառատն են: Փորված հորատանցքերից ջրի էլքը կազմում է 35լ/վրկ, իսկ ճնշամուղումը՝ 10մ:

Շրջանը հարուստ է նաև հանքային աղբյուրներով, որոնք գտնվում են հանքավայրի սահմաններից դուրս, դեպի արևելք, Ուրցի լեռնաշղթայի հարավային լանջերում: Այդ ջրերը նման են Ծղալտուբոյի հայտնի ջրերին և նրանց արդյունաբերական էլքը կազմում է 473.0լ/վրկ:

Շրջանի գետային ցանցը շատ թույլ է զարգացած: Շրջանի հիմնական գետային երակը համարվում է Արաքս գետը իր վտակ Վեղի գետով: Վեղի գետն իր ստորին հոսանքում ունի լայն գետահովիտ: Նրա էլքը նորմալ պայմաններում կազմում է 1-1.5լ/վրկ: Գետի ջրերը ամբողջովին բաժանվում են ոռոգման նպատակներով: Բացի դրանից, հանքավայրի հարավ-արևմտյան ծայրամասով անցնում է ոռոգման արհեստական ջրանցք:

Խմելու ջրով հանքավայրի շրջանը ապահովված է Գառնի-Արարատ ջրատարով:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աշխատակազմի «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկության, 2021թ-ի 4-րդ եռամսյակում Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մոնիթորինգի արդյունքները հետևյալն են.



## Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակում:

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ <sup>3</sup> /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գատնի	1.79	2.95	61	2.15	3.07	70	2.01	3.04	66
Վեդի	Ուրցաձոր	0.25	0.51	49	0.33	0.72	46	0.48	0.72	67
Արփա	Ջերմուկ	1.86	2.75	68	2.02	2.66	76	1.94	2.58	75
Արփա	Արենի	4.98	7.30	68	7.27	8.11	90	8.16	7.55	108

Մակերևութային ջրերի որակ

Արարատյան ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 13 դիտակետում:

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

### 2.7 Հողային ծածկույթ

Հողը բնական գոյացություն է, կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողառաջացնող գործաններն են աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, կլիմայական պայմանները, լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհի և մարդու ներգործությունը:

Հանքավայրի տարածքը ներկայացված է լեռնաշագանակագույն հողերով, իսկ Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում ձևավորվել են մարգագետնային գորշ ոռոգելի, կիսաանապատային գորշ հողեր: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են հիդրոմորֆ սողային աղուտ-ալկալի հողեր:

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմնահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ հասնում է 65-70սմ-ի:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ<sup>3</sup>-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ<sup>3</sup>-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալային մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով:

Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացման պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:

Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5%:


Դրանց քիմիական հատկությունները հետևյալն են.

Հողի տիպը և ենթատիպը	Խորություն նր, սմ	Հումուս , %	CO <sub>2</sub> , %	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	P <sup>H</sup> -ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Մարգագետնայ	0-21	1.8	6.0	26.8	8.4

ին գորշ հողեր	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային:

**Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ**



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ  
ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ**

- 40** Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- 41** Բաց շագանակագույն մնացորդային կարբոնատային
- 47** Կիսաանապատային գորշ տիպիկ մնացորդային կարբոնատային

49 Կիսաանապատային գորշ տիպիկ բերվածքային

53 Ոռոգելի մնացորդային մարգագետնային գորշ խորը պրոֆիլնային

58 Աղուտ-ալկալի մարգագետնային սողա-սուլֆատաքլորիդային

Հանքավայրի տարածքում տարածված են կիսաանապատային գորշ հողեր:

Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրատեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%:

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են  $CaSO_4$ ,  $MgSO_4$  և այլ աղեր:

Ստորև աղյուսակում ներկայացված են գորշ հողերի քիմիական հատկությունները:

Խորությունը, սմ	Հումուս, %	Ընդհանուր, %	CO <sub>2</sub> , %	CaSO <sub>4</sub> , %	Կլանված հումքերի գումարը, Մ.էկվ. 100գ հողում	PH-ը ջրային քաշվածքում
0-8	2.10	0.19	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	0.132	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	0.115	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	0.088	15.6	0.8	18.3	8.1
65-140	0.22	չի որոշված	2.2	42.1	չի որոշված	7.3

Վեդու ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի տարածաշրջանի հողերը ըստ նպատակային նշանակության գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայր, իսկ թիվ 19 հորատանցքի շահագործման համար ցանկապատով առանձնացված 0.03հա մակերեսով հողամասը ըստ նպատակային նշանակության ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության է, ըստ գործառնական նշանակության՝ ընդերքօգտագործման:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Մակերեսը քարքարոտ է: Հողերը բնութագրվում են ցածր որակական հատկություններով

## 2.8 Բուսական և կենդանական աշխարհ

Հայցվող տարածքի բոլոր ուսումնասիրությունները կատարվել են դասական բուսաբանական և կենդանաբանական մեթոդներով: Դաշտային ուսումնասիրությունները իրականացվել են երթուղային մեթոդով, որի ժամանակ կատարվել են գրառումներ, որոշ դեպքերում հավաքվել է խոտաբույսերի հերբարիումներ, նկարահանվել են բույսերը և կենդանիները:

Հետազոտված տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել երկկենցաղներից՝ Փոփոխական դողոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դողոշ անունով: Այս տարածքում հանդիպող հավանական տեսակներից է նաև՝

- Փոքրասիական ճագարամուկը *Allactaga williamsi* Thomas, 1897,
- Անդրկովկասյան կուրամկնիկ *Ellobius lutescens* Thomas, 1897,
- Պարսկական ավազամուկ *Meriones persicus* (Blanford, 1875)

Դաշտային աշխատանքների ժամանակ տարածքում դիտարկվել են հետևյալ կենդանիները և/կամ դրանց կենսագործունեության հետքերը՝

- **Սողուններ՝**

*Eremias strauchi* Kessler, 1878- Շտրաուխի մողեսիկ

- **Թռչուններ**

*Monticola solitarius* (Linnaeus, 1758) - Կապույտ քարակեռնեխ

*Oenanthe hispanica* (Linnaeus, 1758) - Սևախայտ քարաթռչնակ

*Passer domesticus* - Տնային ճնճղուկ

- **Կաթնասուններ**

*Lepus europaeus* Pallas, 1778 - Գորշ նապաստակ

*Microtus majori* - Թփուտային դաշտամուկ

*Vulpes vulpes* - Սովորական աղվես

Հորատանցքի շահագործման համար նախատեսված տարածքի բուսաբանական հետազոտումը կատարվել է 2021 թվականի սեպտեմբեր ամսին: Տարածքը իրենից ներկայացնում է կիսաանապատային չոր բուսականությամբ պատված տրավերտինների ելքեր, որտեղ հողի մակերեսի մեծ մասը զբաղեցնում են տրավերտինային ապարների մերկացումները: Այստեղ ուսումնասիրվել են բարձրակարգ անոթավոր բույսերի ֆլորան, բուսականությունը, հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ տեսակների առկայությունը, տեսակների նշանակությունը:

Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցությունն է՝ Օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) և Հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*) տեսակների գերակշռությամբ:

Բուսաաշխարհագրական առումով հետազոտվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Բացի ֆոնային տեսակներից, բնական

կիսասանապատային բուսականությունը հարուստ է բարդաձաղկավորների այլ տեսակներով՝ *Helichrysum armenium* - Անթառամ հայկական, *Xeranthemum squarrosum* - Անմեռուկ չոված, *Chondrilla juncea* - Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (*Aegilops cylindrica* - Այծակն գլանաձև, *Bromus japonica* – Ցորնուկ ճապոնական, *Taeniatherum crinitum* - Երիզաքիստ երկարամազ, *Poa bulbosa* – Դաշտավլուկ սոխուկավոր), Խաչաձաղկավորներին պատկանող *Lepidium vesicarium* - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն: Ներկայումս այստեղ առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ հողի շուրջ 40-50% ծածկույթով: Թփերից գերակշռում է Դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasiana*) տեսակը:

Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, տարածաշրջանում գրանցված են մի շարք բուսատեսակներ, մասնավորապես՝

**Օշան Օշեի** (*Salsola aucheri*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Գազ Վեդու** (*Astragalus vedicus*), լոբազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Օշան Թամամշանի** (*Salsola tamamschjanae*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Օշան թաղիքային** (*Salsola tomentosa*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Միկրոմերիա թփային** (*Micromeria fruticosa*), շրթնազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Կնճիթաթերթիկ սապատավոր** (*Rhinopetalum gibbosum*), շուշանազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Ցորեն արարատյան** (*Triticum araraticum*), հացազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Տանձենի Ֆյոդորովի** (*Pyrus theodorovi*), վարդազգիների ընտանիքին պատկանող, տանձենի ցեղի ծածկասերմ բույս:

**Խոնդատ մերկացողուն** (*Verbascum nudicaule*), խլածաղկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Կարմրան ութառեջ** (*Tamarix octandra*), կարմրանազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ տերևաթափ թուփ:

**Հոհենակերիա անցողուն** (*Hohenackeria exscapa*), հովանոցավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Վարդատերեփուկ Իլյինի** (*Amberboa iljiniana* Grossh), բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Տերեփուկ Արփայի** (*Centaurea arvensis*), բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Խինձ գորովանի** (լատ.՝ *Scorzonera gorovanica*), բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Նոնեա բազմագույն** (լատ.՝ *Nonea polychroma*), գողտրիկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Երեքօրնիկ պարսկական** (*Hesperis persica*), խաչածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Նրբախոտ թելատերև** (*Leptaleum filifolium*), խաչածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Կեղծճանկաթաթիկ դիխոտոմիկ** (*Pseudoanastatica dichotoma*), խաչածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

**Մեխակ Քուրի** (լատ.՝ *Dianthus cyri*), մեխակազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Բուն հորատանցքի տարածքում նշված բուսատեսակներից որևիցե մեկի աճելավայրի վերաբերյալ գրական տվյալներ չկան, դրանք չեն արձանագրվել նաև կատարված դաշտային տեղագնումների ժամանակ:

Հանքավայրի տարածքից մոտավորապես 4.0կմ դեպի հարավ-արևելք տեղակայված է Գոռավանի ավազուտներ պետական արգելավայրը: Այս տարածքը հայտնի է բույսերի և կենդանիների տեսակային կազմի յուրահատկությամբ: Գրականությունից հայտնի այդ տարածքում հանդիպող կենդանատեսակներից են ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝

1. Դալի ավազամուկը (*Meriones dahli* Shidlovski, 1962),
2. լայնականջ ոզնի (*Hemiechinus auritus* (Gmelin, 1770)),
3. անապատային խածկտիկ (*Bucanetes githagineus* (Lichtenstein, 1823)),
4. մոնղոլական խածկտիկ (*Bucanetes mongolicus* (Swinhoe, 1870)),
5. միջերկրածովային կրիա (*Testudo graeca* Linnaeus, 1758),
6. անդրկովկասյան մողեսիկ (*Eremias pleskei* Nikolsky, 1905),
7. Հորվաթի կլորագլուխ մողես (*Phrynocephalus persicus* De Filippi, 1863),
8. երկարատու սցինկ (*Eumeces schneideri* (Daudin, 1802)):

#### **Եզրակացություն:**

Իրականացված հետազոտությունների ընթացքում դիտարկվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

## **2.9 Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

**Խոսրովի արգելոցը** կազմավորվել է 1958 թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղի Գառնիի և Վեդի գետերի ավազանում: Մակերեսը 23213.5հա է: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 1600-3400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում հանդիպում է բույսերի 1849 տեսակ (Հայաստանի

բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլոնյան աշորան (տարեկան) և այլն: Արգելոցում հանդիպող ողնաշարավոր կենդանիների 283 տեսակից (որը հայաստանի կենդանական տեսակային կազմի 46%-ն է) 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են՝ քարակազավր, [սև անգղը](#), [գառնանգղը](#), կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:



«Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին:

Խոսրովի արգելոցի տարածքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ: Հայցվող տարածքից գտնվում է շուրջ 15կմ հեռավորության վրա:

**«Գոռավանի ավազուտներ»** արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա: Գտնվում է հանքավայրից շուրջ 4.0կմ դեպի հարավ-արևելք:

**«Խորվիրապ»** արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա: Հանքավայրից հեռավորությունը կազմում է 12-15կմ:



Հանքավայրի շահագործումը բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական աղդեցություն ունենալ չի կարող:

**2.10 Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.**



Խոր Վիրապ վանական համալիր

Արարատի մարզի պատմամշակութային հուշարձաններից են Լուսառատ գյուղից 1,6 կմ հյուսիս-արևմուտք գտնվող բլուրների վրա տեղադրված Խոր Վիրապ վանական համալիրը և Արտաշատ հնավայրը, Դվին հնավայրը՝ Հնաբերդ և Վերին Արտաշատ գյուղերի միջև ընկած բլրի վրա, Տափի բերդը՝ ամրոցը եկեղեցիով (որը կոչվում է Գևորգ Մարգալետունու անունով)՝ Ուրցաձոր գյուղից 6-6,8 կմ հյուսիս-արևելք, Հավուց Թառ վանական համալիրը՝ Գառնիգյուղից 2,8-3,4 կմ արևելք, XII դարի Սուրբ Կարապետ վանքը՝ Լանջառ գյուղից 5,7-6,3 կմ հյուսիս-արևմուտք, Կաքավաբերդը (Գեղիի կամ Քեղիի բերդ)՝ Գառնի գյուղից 12,3-13 կմ հարավ-արևելք, Աղջոց վանքը՝ Գառնի գյուղից 6,1-6,5 կմ հարավ-արևելք:

Ուշագրավ է Խոր Վիրապ պատմաճարտարապետական հուշարձանը, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեղի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվում հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի հետ:

Խոր Վիրապ պատմաճարտարապետական՝ XIII դ. վանք-ամրոց համալիրը, եղել է հայոց ուխտատեղիներից մեկը և հանդիսացել է դպրության կենտրոն: Ունեցել է վարպետատուն, ուսուցչապետեր են եղել Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին: Հնում այստեղ է գտնվել պատմական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը:

ՀՀ կառավարության 15.03.2007թ-ի թիվ 385-ն որոշմամբ ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը հետևյալն է.

**ՎԵՂԻ քաղաք**

1	2	3
ԱՄՐՈՑ	8-13 դդ	քաղաքից 1 կմ հս-աե, «Գյա-վուրի դալա» բլրի վրա
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1977թ	քաղաքի մեջ
ՎԵՂԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԸ		Երևան-Վեղի խճուղու աջ կողմում

Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2008թ-ի թիվ 967-Ն որոշման, Արարատի մարզում գրանցված են բնության հետևյալ հուշարձանները.

1.	«Յախշխան» քարանձավ	Արարատի մարզ, Վեղի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեղի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում

0.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
----	-------------------------------------	---

**Կենսաբանական հուշարձաններ**

1.	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղաք Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա
----	--------------------	--

**3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**3.1 ՀՀ Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը**



**Արարատի մարզը կազմավորվել է 1995թ. դեկտեմբերի 4-ին:**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տարածքը - 2096 քառ. կմ

Գյուղատնտեսական հողատարածքը	-	156760 հա
այդ թվում՝ վարելահողեր	-	2690053 հա
Մարզկենտրոնը	-	Արտաշատ քաղաք
Քաղաքային համայնքներ	-	4
Գյուղական համայնքներ	-	93
Բնակչությունը	-	277.600 հազ. մարդ
(մշտական, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ)		
այդ թվում՝		
քաղաքային	-	81.700 հազ. մարդ (29.4 %)
գյուղական	-	195.900 հազ. մարդ (70.6 %)

Ըստ ՀՀ Արարատի մարզի 2020 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ մարզի վարչական տարածքի մակերեսը 209,003.2հա է (2,090քառ.կմ), այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության՝ 156,470.0 հա, որից վարելահող՝ 24,604.4 հա:

Գյուղական բնակչությունը՝ 210.3 հազ. մարդ՝ ամբողջ բնակչության 70.6%, քաղաքայինը՝ 80.6 հազ. մարդ, 29.4%: Բնակչության խտությունը՝ 141 մարդ՝ 1 քկմ-ի վրա: Տնտեսությունների թիվը՝ 58228:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան - Երասխ - Լեռնային Ղարաբաղ ավտոմայրուղին, և Երևան - Երասխ երկաթուղին:

Մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, 6 քոլեջ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ «Արտաշատ» համալսարանը, 55 առողջապահական հիմնարկներ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 49 բուժամբուլատորիա, մշակույթի օջախներ, Արտաշատ քաղաքում Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Պարույր Սևակի և Սպարապետ Վ.Մարգարյանի տուն թանգարանները, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը: Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառի մի մասը: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքները:

Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ:

Մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմում է 16.6 %:

Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ծավալի 8.0 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու- կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, «Արարատ – ցեմենտ», «Ոսկու կորզման ֆաբրիկան», Արտաշատի, Արարատի պահածոների, «Մասիս տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս տոբակո» գործարանները:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազրոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզը ունի 4 քաղաքային /Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս/, 93 գյուղական համայնք:

### **3.2. Ազդակիր համայնքը, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը**

Դաշտաքար, գյուղ Հայաստանի Արարատի մարզում, Արարատի տարածաշրջանում, Վեդի քաղաքից 3 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 19 կմ հեռավորության վրա:

Գյուղը հիմնադրվել է 1897 թվականին: Նախկինում ունեցել է Դաշլը, Դաշլի, Դաշլու, Տաշլու անվանումները: Դաշտաքար է վերանվանվել 1968 թվականին:

Ընկած է Արարատյան դաշտի նախալեռներում, Վեդի գետի աջ ափին՝ ծովի մակարդակից 970մ բարձրության վրա: Երեք կողմից շրջապատված է ցածր, բուսականությամբ աղքատ լեռներով:

*Բնակչություն*

Տարի	1897	1926	1939	1959	1970	1979	2001	2004	2011
Բնակիչ	184	161	273	182	298	409	555	558	526

*Տնտեսություն*

Գյուղն ունի առկա 154 տնտեսություն, դաբոց, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Ըստ ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ համայնքի վարչական տարածքի մակերեսը 6,741.86 հա է, որից 5,606.36 հա՝ գյուղատնտեսական նշանակության, այդ թվում՝ վարելահողերը՝ 221.46 հա, բազմամյա տնկարկները՝ 91.47 հա, արոտավայրերը՝ 4,686.39 հա, այլ հողատեսքերը՝ 607.04 հա:

Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը նույնպես յուրացվում են որպես այգիներ, վարելահողեր:

**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների իւելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծությունն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ,

սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Վեդու ածխաթթվային հանքային ջրի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնաձին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր:

Վեդու ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 19 հորատանցքի տարածքում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից:

## 5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ /ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

- Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝
- Մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- Բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:
- Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.
- Պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- Բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- Աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Վեդու ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 19 հորատանցքը գտնվում Դաշտաքար գյուղի վարչական տարածքում, հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները և այլն:

Հորատանցքի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով հորատանցքի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտիները պարսպատված են ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Սանիտարական առաջին գոտու սահմանները պահպանելու համար, ելնելով հորատանցքի ելքի ռելիեֆային պայմաններից, ջրհավաք կառույցը արգելափակվել է 30մ շառավիղով:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես աղբյուրի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս:



Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ աղբյուրի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքային աղբյուրի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

Հողի բերրի շերտի պահեստավորման պահանջները կարգավորվում են ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն վերոնշյալ որոշման, հողաշերտը առաջնային կարգով օգտագործվելու է խախտված հողերի ռեկուլտիվացիայի համար:

Հորատանցքի շահագործումը հողային շերտի վրա ներգործություն չի առաջացնելու, հողաբուսական շերտի հեռացման և պահպանության անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով այն հանգամանքից, որ ընկերության կողմից շահագործվող հորատանցքն արդեն իսկ կահավորված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, իսկ հանքային ջրերի գործարանը կահավորված է համապատասխան սարքավորումներով, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն չկա, ուստի կարելի է փաստել, որ արդյունահանման թույլտվության տրամադրման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ նվազեցնելու համար լրացուցիչ միջոցառումների նախատեսում չի պահանջվում:

### ***5.1. Բնապահպանական մշտադիտարկումների պլան***

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի զերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.

2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.

3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.

4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.

6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,

8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 19 հորատանցքի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվի մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակը):

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկ-ի օբյեկտը	Մշտադիտարկ-ի վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկ-ի տեսակը	Նվազագույն հաճախակա ն-ը
<b>Հանքային ջրեր</b>	հանքավայրի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 19 հորատանցքի	- ջրերի քիմի-ական կազմ, - մակարդակ, ջերմաստիճան, ջրի և գազի ծախս	նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն, - չափումներ	- եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
<b>Մթնոլորտային օդ</b>	հորատանցքի տարածքում	- օդի աղտոտում փոշիով և արտանետում-ներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
<b>Հողային</b>	հորատանցքի տարածքում	- հողերի քիմի-ական կազմ, - հողերում նավ-	- նմուշառում, նմուշի	- տարեկան

ծածկույթ		թամթերքների պարունակու-թյունը	լաբորատոր հետազոտու-թյուն	երկու անգամ
Կենսաբազմաան ության ուսումնասիրություն	հորատանցքի տարածքում	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	- տարեկան մեկ անգամ


Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH<sub>4</sub>, Ca, Mg, Fe, Cl, SO<sub>4</sub>, NO<sub>2</sub>, NO<sub>3</sub>, CO<sub>3</sub>, HCO<sub>3</sub>, SiO<sub>2</sub>, H<sub>2</sub>S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Դիտակետերի տեղադիրքերը և կոորդինատները ներկայացվում են



Հանքային ջրերի և մթնոլորտային օդի դիտակետը՝ թիվ 2, հողային ծածկույթի և մթնոլորտային օդի դիտակետը՝ թիվ 1 կենսաբազմազանության դիտակետը՝ թիվ 3:

Դիտակետերի կոորդինատներն են.

1.  $y = 8478033$

$x = 4423223$

2.  $y = 8477973$

$x = 4423220$

3.  $y = 8478009$

$x = 4423125$

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության հաստատմանը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

## ***5.2. Մանիտարական պահպանության գոտի***

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն աղբյուրի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, աղբյուրի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով ջրհավաք թիվ 19 հորատանցքի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Ջրհավաք թիվ 19 հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտիները պարսպատված են ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Սանիտարական առաջին գոտու սահմանները պահպանելու համար, ելնելով թիվ 19 հորատանցքի ելքի ռելիեֆային պայմաններից, ջրհավաք կառույցը արգելափակվել է 30մ շառավիղով:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ աղբյուրի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքային աղբյուրի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

### **5.3 Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան**

Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը աշխատանքային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և

առողջության համար անվնաս, կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Այդ ամենը պարտավոր է ապահովել գործատուն:

Աշխատողների անվտանգությունը եւ առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի եւ առողջության պահպանման համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական եւ այլ միջոցառումներ:

Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ:

Աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: Հաշվի առնելով կազմակերպության մեծությունը, աշխատողների համար արտադրության վտանգավորության աստիճանը՝ գործատուն կազմակերպությունում ներգրավում է աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման որակավորված ծառայություն կամ այդ գործառույթն իրականացնում է անձամբ:

Անվտանգության ապահովման կանոններից կարելի է նշել.

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորները և ծառայողները պարտավոր են անցնել բժշկական ստուգում,
- յուրաքանչյուր բանվոր, անվտանգության տեխնիկայի գծով նախնական ուսուցումից հետո, պետք է անցնի ըստ մասնագիտության ուսուցման և հանձնի քննությունները,
- աշխատանքային յուրաքանչյուր տեղ աշխատանքներն սկսելուց առաջ հերթափոխի պետի կողմից պետք է կատարվի զննում:
- յուրաքանչյուր բանվոր, մինչ աշխատանքը սկսելը, պետք է համոզվի իր աշխատատեղի անվտանգության ապահովումը,

Արտադրական հրապարակում աշխատողների համար նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ, որոնց կազմակերպումը նախատեսվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2012թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 15-ն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը» հրամանով: Համաձայն վերոնշյալ հրամանի՝ սանիտարակենցաղային հարմարություններն են հանդիսանում՝ հանդերձարանը, ցնցուղարանը, զուգարանը և հանգստի սենյակը: Սանիտարակենցաղային հարմարություններին ներկայացվող պահանջներից են.

#### **Հանդերձարանին ներկայացվող պահանջներն են.**

1) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության

գործոններից գերծ կազմակերպություններում, անձնական հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են բաց հանդերձապահարաններով, կամ կախիչներով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

2) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպություններում, անձնական հագուստի և աշխատանքային հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են փակվող դռներով երկտեղանոց հանդերձապահարաններով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխություն:

4) Հանդերձարանը նախատեսված է անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար:

#### **Ցնցուղարանին ներկայացվող պահանջներն են.**

1) ցնցուղների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով,

2) ցնցուղների թիվը չի գերազանցում 30-ը,

3) իրականացվում է բնական օդափոխում:

4) Ցնցուղարանը ներառվում է աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպությունների սանիտարակենցաղային հարմարությունների կազմում և տեղակայվում է կից:

#### **Լվացարանին ներկայացվող պահանջներն են.**

1) սարքավորվում է արմնկային կամ ոտնակային կառավարման հարմարանքներով՝ վտանգավոր, մաշկի միջոցով օրգանիզմ թափանցող, խիստ հոտավետ նյութերի ինչպես նաև ստերիլ նյութերի արտադրության կազմակերպություններում,

2) ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օձառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով,

3) ծորակների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 10 աշխատողին մեկ ծորակ հաշվարկով:

#### **Չուզարանին ներկայացվող պահանջներն են.**

1) սանիտարատեխնիկական սարքավորումների (զուգարանակոնքերի) թիվը սահմանվում է 15 մարդուն մեկ սանիտարատեխնիկական սարքավորում հաշվարկով,

2) նախամուտքում յուրաքանչյուր 4 սանիտարատեխնիկական սարքավորման հաշվարկով տեղադրվում է 1 լվացարան, բայց ոչ պակաս, քան մեկ լվացարան՝ յուրաքանչյուր զուգարանում,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխում,

4) սանիտարական սարքավորումների թվի 3-ից ավելի դեպքում, զուգարանում տեղադրվում է ներիոս-արտաձիգ արհեստական օդափոխության համակարգ:

5) Զուգարանի և հեռավորությունը աշխատատեղերի միջև 50 մետրից ոչ ավելի է:

6) Զուգարանի սանիտարական պահպանումն ապահովվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

**Հանգստի սենյակին ներկայացվող պահանջներն են.**

1) կահավորվում է համապատասխան կահույքով, կախիչներով, լվացարաններով, խմելու ջրով,

2) ապահովվում է տաքացման և/կամ հովացման սարքավորումներով:

3) Հանգստի սենյակը նախատեսվում է կազմակերպություններում, որտեղ առկա են սառեցնող և տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղեր, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններ՝ աշխատանքի ընթացքում աշխատակիցների ջերմաստվության կարգավորման և աշխատողների հանգստի նպատակով:

4) Սանիտարակենցաղային հարմարությունները տեղադրվում են առանձին սենյակում կամ՝ արտադրություններին հարակից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԿԱՅԱԿԱՆ**

**ՄՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «15» Հուլիսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անջարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը (հետևյալ տվյալներով).

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)**

«ՍԻՄՈՆ ԱԿԿՍ» ՍՊԸ

**2. ՄՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ՄՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Արարատ, համայնք Դաշտաբաղ Թբու ջրի փողոց 19

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԵ ՀԻՄՔ ՀԱՆՐԻՄԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ**

Վարձակալության պայմանագիր 28.12.2016թ. ս/վ 3145, Դատարանի վճիռ վարչական գործ թիվ ՎԳ3/0126/05/15, Վարձակալության պայմանագրում և համաձայնագրում լիարժույթ կատարելու մասին 10/07/2019թ.ս.վ.2223 համաձայնագիր

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ**

Կադաստրալին ծածկագիրը՝ 03-034-0150-0028

Մակերեսի չափը (հա)՝ 0.03

Նպատանալին նշանակություն՝ արդյունաբերության քնիտեղծությունգործման և այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդերքի օգտագործման համար տրամադրված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքով հայտնում եմ, որ «Միմոնա Ակվա» ՍՊ ընկերությունը (Գրանցման համար՝ 278.110.04497 / 2010-07-27, ՀՎՀՀ՝ 00453147, ՁԿԴ՝ 39355682) (Պետ. Ռեգիստր, կանոնադրություն և հողի սեփականության վկայականը կցվում են) չի նախատեսում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի տեղամասի ընդերքի օգտագործման թույլտվության երկարացման, ընդլայնման կամ վերաձևակերպման գործընթաց իրականացնել:

Միաժամանակ հայտնում եմ, որ մեր ընկերությունը չի առարկում «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերության կողմից Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի տեղամասի ընդերքի օգտագործման թույլտվության գործընթացի իրականացմանը և պատրաստակամ է աղբյուրի տարածքի հողի վկայականը անհատույց փոխանցել «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերության:

Տեղեկանքը կարող է տրամադրվել ըստ պահանջի:

«Միմոնա Ակվա» ՍՊԸ-ի  
տնօրեն՝



Ա. Միսեյան



02.05.2022թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԹՔԱՅԻՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО  
УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ  
ՖՈՆԴ» ՊՊԱԿ

«РЕСПУБЛИКАНСКИЙ ГЕОЛОГИЧЕСКИЙ  
ФОНД» ГНКО

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA  
«REPUBLICAN GEOLOGICAL FUND» SNCO

ՀՀ, Երևան, 0025, Չարենցի փ. 46  
Հեռ. (+374 12) 55-75-94  
E-mail: info@gro-fund.am

РК, Ереван, 0025, ул. Чаренца 46  
Тел. (+374 12) 55-75-94

46 Charents st., 0025 Yerevan, RA  
Tel. (+374 12) 55-75-94

13 Հոկտեմբեր, 2022

№ Ֆ-494/22

«ՄԻԼ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐՄԱՆ ՍՊԸ  
Տնօրեն Վահագն Ալեքսանյանին

Ի պարտախան 11.10.2022 թ-ի թիվ 308 դիմում-հայցով

Հարգելի պարոն Ալեքսանյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արարատի մարզի Վեդիի անխաթմային հանքային ջրերի հանքավայրի թիվ 19 հորատանցքի հաստատված պաշարների վերաբերյալ հայցվող տեղեկատվությունը:

ՀՀ Արարատի մարզի Վեդիի անխաթմային հանքային ջրերի հանքավայրի հաշվեկշռային պաշարները 20.10.1973թ. դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 16.11.1973թ. N 7032 արձանագրությամբ, որպես արդյունաբերական (շաղցման), բուժական՝ բուժիչ-խմելու և հանքարուժական նպատակներով օգտագործման պիտանի, հանքային ջրի ստորև արդուսակում նշված քանակներով:

Հորատանցքի համարը	Պաշարներն ըստ կարգերի, մ³/օր / լվրկ			Հանքայն ացումը, գ/լ	Լուծված CO <sub>2</sub> -ի պարունակությունը, գ/լ	Ջերմաս տիժանը, °C
	A	B	A+B			
Հորատանցք 19	-	56 / 0.65	56 / 0.65	2.5-2.9	1.9-2.0	18-19

Հարգանքով,

13.10.2022

X

Տնօրեն  
Signed by: MOSEGHENI VAGHAGN



Տնօրեն՝

Հ Մովսիսյան

Կարգավոր՝ Լիլիա Ալախչյան  
Հեռախոս՝ (010) 55-75-93

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2022 թվականի մայիսի 3-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաբար բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերության ՀՀ Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ հանքային 1-ին քննարկումն է:

Լսումների ընթացքում, որը տեսաձայնագրվել է, «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացվել է հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության, նոր աշխատատեղեր ստեղծման, ընկերության կողմից համայնքին, սոցիալական և այլ օժանդակության հարցեր:

«Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պատասխանեց համայնքի ազդագրի ներկայացուցիչների կողմից բարձարացված մի շարք հարցերի:

Ավարտին՝ «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հաստատեց, որ օգտակար հանածոյի իրավունքի առկայության դեպքում այդ բոլոր ստանձնած պարտավորությունները կիրականացվեն:

Լսելով վերոգրյալը, մենք՝ ներքոստորագրյալներս կողմ ենք և տալիս ենք մեր համաձայնությունը ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաբար բնակավայրի տարածքում «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի ստանալու և այլ աշխատանքներ իրականացնելու համար:

Լսումների կազմակերպիչ.

Վեդի համայնքի ներկայացուցիչ՝

Վեդի համայնքի Դաշտաբար

բնակավայրի առ. Մասնագետ՝



*Մարգարիտա Եսայան*  
*Մարգարիտա Եսայան*

2022 թվականի մայիսի 3-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի «Աղի համայնի  
 Դաշտաբար բնակավայրի վարչական շենքում «Միլ հանրային ջրերի գործարան» ՍՊ  
 ընկերության ՀՀ Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի  
 տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ հանրային 1-ին հանրային  
 քննարկում ներկա մասնակիցները:

Ը/Ի	Անուն, ազգանուն, հայրանուն	ստորագրություն
1	Համբարձում Բաղդասարյան	
2	Երվանդ Գրիգորյան Անանիայի	
3	Մարգարիտ Զեփյան Եղիշ	
4	Մարգարյան Արամիսյան Կարենի	
5	Մարգարյան Ստեփան Անիսի	
6	Անանիայան Եսաթյան Լուսինե	
7	Սեդրակ Զոհրաբյան Մարգարյան Գրիգոր	
8	Յուրայր Արտիստիկ Արտիստյան	
9	Ղազար Երվանդի Անիսի	
10	Գեորգի Կոնստանտին Արամի	
11		
12		
13		
14		
15		
16		

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայրը տալիս է իր համաձայնությունը «Միլ հանքային ջրերի գործարան» ՍՊ ընկերության կողմից /օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով/ ՀՀ Արարատի մարզի «Արարատ» անխաթարվային հանքային ջրի թիվ 19 աղբյուրի տեղամասի տարածքում համապատասխան աշխատանքների իրականացնելու վերաբերյալ:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ  
ՀԱՄԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ